

տակ է այնպիսի ամուր հող, ինչպիսին է աշխատող մասսայի շահերը և առասարակ արդարութիւնը:

— Եռուսով լրանում է մի տարի և թուրքերի սկսած յարձակումները հայերի վրայ գեռւս չեն զսպուած. հայր, տեսնելով փթած և ապիկար բիւրօկրատիայի յանցաւոր և միտումաւոր թուլութիւնը թուրքերին զսպելու գործում, ստիպուած եղաղիմելու ինքնապաշտպանութեան: Զափազանց տարօրինակ է որ այժմ Գոլոշապով գեներալը և զնդապետ Վէփերն հայոց գիւղերն են թիւղանօթներով ուժակում: «Թալան և զէնք» պահանջելով հայերից: Զարմանալի է որ մարդարապան թուրք բէզերն և պրիստաները չեն ձերրակալւում, այլ բժիշկ Ք. Բահամբեանի և Գ. Մ.-Շահնազարեանի նման անպայման խաղաղասէր և ամենից յարգուած անձնաւորութիւններ: Այս բոլորից յետոյ Կրպենի, Մինքենդի, Զահրի և այլ տեղերի հայերի գըլխին բարրարոսութիւններ գործող թուրքերը կարող են խրախուսուել իրանց քաջազործութիւնների մէջ, միանգամայն հաւատացած որ այդպիսով իշխանութեան սրտից ջուր են խմում և հովացնում են հայակեր չինովնիկների վրիժառու տաելութիւնը հայից: Արդէն տաղտկալի է զանում կրկնել զանազան խաղարական փորձերի մասին, երբ դիմացիդ տեսնում ես կանգնած գոլիցինեան ընթիմի մարդկանց, իրանց կարձամիտ և տէմարդի «քաղաքականութեամբ»...

Գոլիցինի ստեղծած Աւգեան ախոռները մաքրելու համար, ինչպէս երեւում է, Հերկուլեսեան ջանքեր են հարկաւոր և ոչ պալլեատիւններ. և ժամանակ է որ այդ ճշմարտութիւնը հասկանար բարձր իշխանութիւնը, ինչպէս նա ըմբռնեց այդ՝ հայոց կալուածների և գպրոցների խնդրում...

I. U.

31 Յունուարի

Պետական Դումայի ընտրութիւնների կանոնադրութեան գործադրութիւնը Կովկասում:

Կովկասուան նահանգները և ընտանիները Պետական Դումայի անդամների ընտրութիւնները կատարում են այն ընդհանուր հիմունքներով, որ մատնացոյց են արուած 1905 թուի օգոստոսի 6-ի Բարձրագոյն հաստատուած Պետական Դումայի ընտրութիւնների Կանոնադրութեան մէջ, նոյնպէս և դեկտեմ-

րերի 11-ի Բարձրագոյն տուած ուկազի մէջ, որով այդ կանոնադրութեան մէջ փոփոխութիւն է մտցրուած, հետեւեալ շեղումներով.

1) Ընտրութիւնները կատարելիս Զաքաֆալի շրջանակը (օկրոց) միացնուում է Դապստանի շրջանի հետ, վերջինիս հետ կազմելով մի ընտրողական շրջանակ: Մի ընտրողական շրջանակ են գառնուում նոյնպէս Զերնոմօրեան նահանգը, Սուխումի շրջանակը և Բաթումի շրջանը:

2) Տերեքի և Կուրանի շրջաններում կազմուում են երկու շրջանային ընտրողական ժողովներ ամեն մէկում. մէկը—զինուորական կազակների դասակարգի ընտրողներից, իսկմիւար—շրջանի մնացեալ ազգաբնակութիւնից: Այդ ժողովներից իւրաքանչիւրը իր կողմից ընտրուում է Պետական Դումայի համար այնքան թիւ անդամներ, որքան որ յիշուած է կցուած ցուցակում:

3) Ամեն մի գաւառուում, շրջանակում կամ շրջանարաժման-մունիքում, ի բաց ասեալ ներքեուում յիշածները, կազմուում են երեք ընտրողական ժողովներ. ա) հողատէրերի ժողով; բ) քաղաքային ընտրողների ժողով և գ) գաւառամասների (участков.) դիւցական ժողովների ընտրած լիազօրների ժողով:

Կուրանի շրջանարաժիններում (ՕՏՃԵԼ), նոյնպէս և Տերեքի շրջանի այն բաժիններում, ուր կան կազակների ստանիցաներ, կազմուում է բացի դրանից և ստանիցաների լիազօրների ընտրողական ժողով:

4) Բանուորներից ընտրողները,—ընտրուում են ընդհանուր հիմունքներով, Կովկասեան երկրի հետեւեալ նահանգներում և բաղաբներում այս քանակութեամբ. Բագու (նահանգում և քաղաքում)—4, Բաթումի շրջանում—1, Թիֆլիսի (Թիֆլիս բաղաբում և նահանգում)—2 և Զերնոմօրեան—1:

5) Բազուի և Թիֆլիսի նահանգներում բանուորական ընտրողների ընդհանուր թիւը բաշխուում է այդ երկու նահանգների և նախորդ պրակուր յիշուած քաղաքների մէջ, համաձայն թէ բաղաբի սահմանների մէջ, թէ դուրսը—նահանգի կամ շրջանի սահմաններում գանուող գործարանական, հանքային և հանքաղործական արդիւնաբերութիւնների ու երկաթուղային արհեստանոցների մէջ եղած բանուորների ընդհանուր թուին:

6) Բաթումի շրջանի Արդուինի շրջանակում և Կարսի շրջանի բոլոր շրջանակներում մասնաւոր հողատէրերի ժողովներ չէ կազմակերպում, իսկ այն անձինք, որոնք այս կանոնադրութեան 12 յօդ, հիման վրայ ընտրութիւններին մասնակցելու իրաւունք

ունեն, մասնակցում են այդ շրջանակներում քաղաքային ընտրողների ժողովին:

7) Քաղաքային ընտրողական ժողովներ չեն կազմւում.—Բօքչալուի և Թիօնէթի—Թիֆլիսի նահանգում, Լեշխումի, Բաշիի և Շօրապանի—Քութայիսի նահանգի մէջ, Արէշի, Կարեագինի, Զիվանշիրի և Ղաղախի—Գանձակի նահանգում, Գեօկշայի—Բագուի նահանգի մէջ, Սուրբալուի, Շարուրու-Գարալագիազի և Էջմիածնի—Երևանի նահանգի մէջ, Քիւրինի—Դաղստանի շրջանում, Բատալիաշինի, Կովկազի և Լարինսկի—Կուրանեան շրջանում, Նայչինի, Խասավիլրդի և Սունժենիան բաժանմունքում—Տերեփի շրջանի մէջ: Քաղաքային ընտրողական ժողովների մասնակցելու իրաւունք ունիցող անձինք այդ գաւառներում, բաժանմունքներում և շրջանակներում (բացի Քիւրինի) մասնակցում են հողատէրերի ժողովներում:

8) Դաղստանի շրջանի Աւարեան, Անդեակի, Գունիբի, Դարգինի, Ղազիդումուլսի և Սամուրեան շրջանակներում մասնաւոր հողատէրերի և քարաքային ընտրողների ժողովներ չեն կազմւում, այլ այդ երկու կատէգորիաների եղած ընտրողները մասնակցում են Թէմիրխանչուրայի շրջանակի համապատասխան ժողովներում:

9) Դաղստանի շրջանի Քիւրինի մասի քաղաքային ընտրողները մասնակցում են Կայտագո-Թարասարանի վիճակի քաղաքային ընտրողների ժողովում (Դերենի քաղաքում):

10) Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փօխարքայից է կախուած, երբ նա անհրաժեշտ համարի, ընտրութիւններ կատարելու համար միացնել մի և նոյն նահանգի կամ շրջանի սահմաններում գտնուող առանձին գաւառները (շրջանակները) ու կազմել նրանց համար միացեալ ընտրողական ժողովներ:

11) Այն գաւառներում, որոնց վարչութիւնները դան ւում են գաւառական քաղաքում, ընտրողների ժողովները գումարելու աեղը որոշում է նահանգապակեաթ:

12) Գաւառական հողատէրերի ընտրողական ժողովներում անմիջական կերպով մասնակցում են: 1) Անդրկովկասի նահանգներում և շրջաններում՝ այն անձինք, որոնք վճարում են իրանց պատկանող հողային կամ ուրիշ կայքի համար (որոնք չեն մասնում Պետ. Դում. կանոն. 16 յօդ. 1 կէտում յիշուած առևտրա-արդիւնաբերական հիմնարկութիւնների շարքը) զեմսովային հարկ, տարեկան ոչ պակաս 15 րուբլուց: 2) Տերերի և Կուրանի շրջաններում այն անձինք, որոնք իրանց պատկանող հողային կայքերի համար վը-

ճարում են պետական հողային հարկ տարեկան 3 ր. 50 կ. և 3) այն անձինք, ա) որոնք կառավարում են, Անդրկովկասի նահանգներում կամ շրջաններում հարկատու կալուածքներ պայմանագրի կամ հաւատարմաթղթի հիման վրայ մի տարուց աւելի և վճարում են զեմանվային հարկ տարեկան ոչ պակաս 15 բուրբուց, իսկ Կուրանի և Տերերի շրջաններում՝ պետական հողային հարկ տարեկան 3 ր. 30 կոպէկից ոչ պակաս, կամ բ) կապալով են վերցրել մի և նոյն հիմունքներով հողի համապատասխան քանակութիւն:

13) Այն անձինք, որոնք իրեւ ուեպհականատէր կամ ցմահ տիրապետող, մի ամրող ասարի վճարում են կալուածքի համար զեմստվային տուրքեր կամ պետական հողային հարկեր նախորդ յօդուածի մէջ յիշած քանակից պակաս՝ մասնակցում են ընտրութիւններին լիազօ՞նների միջոցով:

14) Այն անձինք, որոնք, 1905 թիվ զեկտեմբերի 11-ի Բարձրագոյն հրովարտակի Ա բաժնում յիշած իրաւոնքները անեն, հետևեալ գիւղաղաղաքներում՝ Բաթումի շրջանում՝ Արդգուինը, Թութայիսի նահանգում. Զուգդիլը և Ինգուդ-Կալէն, Բագուի նահանգում՝ Սալեանը, Ղարսի շրջանում՝ Կաղզուանը, Արդանանը և Օլթին,—մասնակցում են ընտրութիւններին քաղաքային ընտրովների ժողովներում:

15) Գիւղական գաւառամասերի ժողովներից լիազօ՞ններ ընտրելու համար, Կովկասեան նահանգների ու շրջանների, գիւղերը, առևները և գաղութները (բացի Բաթումի և Ղարսի շրջաններից) մի քանի մասերի են վերածւում, առանձին ցուցակներով, որ կազմում են նահանգական իշխանութիւնները և վաւերացնում է Փոխարքան: Այդ տհօսկ մատերի կարող են վերածուել, Փոխարքայի հայացողութեամբ նաև կազակների սակաւամարդ ստանիցաները:

Ժանովթութիւն: Գանձակի և Երևանի նահանգներում առաջին ընտրութիւնների համար Փոխարքան իրաւոնք ունի միացնել գիւղերը և գաղութները ու կազմել առանձին մասեր, թէկաւ այդ գիւղերը միմեանցից բաժանուած լինեն միջանկեալ հողերով:

16) Գաւառամասի ժողովը հրաւիրում է նահանգական իշխանութեան ցուցմունքով, գաւառամասի մի որ և է գիւղում, առևլում կամ գաղութում տեղական տանուտէրի նախագահութեամբ և կազմում է գաւառամասի մէջ մտնող գիւղերի, առևների և գաղութների ընտրուածներից: Ընտրուածները ընտրուում են ժողովներում իւրաքանչիւր տասը տասն կողմից

մէկը, իսկ տասը տնից պակաս ունեցող զիւղերը ընտրում են մի ընտրող միայն:

17) Գաւառամասերի գիւղական ժողովները, նոյնպէս և կազակների ստանիցաների ժողովները և մասերը (յօդ. 12) ընտրում են երկու երկու լիազօրներ իւրաքանչյուրը:

18) Բաթումի և Ղարսի շրջաններում լիազօրներին ընտրում են գիւղական շրջանակների ժողովները, ամեն մի ժողովից երկուսը:

19) Գաւառական հողատէրների ընտրողական ժողովներին մասնակցելու իրաւունք ունեցող անձանց ցուցակը Անդրկովկասում կազմում են գաւառապետները կամ շրջանային կառավարիչները, իսկ Տերեքի և Կուբանի շրջաններում՝ տեղական ատամանները: Քաղաքային ընտրողների ցուցակը կազմում են քաղաքային վարչութիւնները, իսկ այն քաղաքներում ու գիւղաբաղաբերում, ուր քաղաքային տնտեսական կառավարութիւնը կազմուած է Կովկասեան երկրի կառավարութիւնը կազմուած է Կովկասեան երկրի կառավարութիւնը:

20) Այն գաւառներում, ուր չը կան ազնուակնութեան գաւառական պարագլուխներ, մասնաւոր հողատէրների թէ ընտրողական և թէ նախընտրական ժողովներում նախագահում է տեղական հաշտարար գատաւորը հաշտարար ժողովի (Կուբանի և Տերեքի շրջաններում) կամ նահանգական գատարանի կարգադրութեամբ: Հաշտարար գատաւորները նախագահում են նոյնպէս և այն գաւառների քաղաքային ընտրողների ժողուում, որոնց վարչական կենտրոնը գտնուում է ոստիկանական հաստատութիւնների միջոցով կառավարուող գիւղաբաղաբերում:

21) Նահանգական ընտրողական գործերի համար մասնաժողովներ են կազմուում Բազուի, Գանձակի, Թիֆլիսի սահանգգներում, նոյնպէս և Կուբանի ու Տերեքի շրջաններում: Բազուի մասնաժողովին են ենթարկուում, յիշեալ նահանգից բացի, նոյնպէս Գանձակի ու Զարաթալայի շրջանները, Թուֆայինի մասնաժողովին՝ Բաթումի շրջանը, Սեւեծովկան ու Սուխումի շրջանը: Երևանի մասնաժողովին՝ Կարսի շրջանը:

22) Նահանգական ընտրողական գործերի համար մասնաժողովները կազմուում են նահանգական գատարանի նախագահի նախագոհութեամբ, իսկ անդամները լինուում են՝ արքունական պալատի կառավարիչը, նահանգական քաղաքի և գաւառի ազնուականութեան պարագլուխը, նահանգական գատարանից նշանակած անդամներից մէկը, նահանգական քաղաքի քաղաքայի բարգալուխը և նահանգական գիւղացիական (կամ շինական)

գործերի առևանի մի անդամը, որին նշանակում է նահանգապետի: Մտաւրօպոլի արքունական պալատի կառավարիչը կարող է իր փոխարքէն նշանակել Տերերի մասնաժողովի ընտրուզական գործերի մասնակցությունը համար նոյն պալատի տեղական բաժանմունքի վառավարչին:

Ժամանոթ. Տերերի և Կուրանի ընտրողական գործերի մասնաժողովներում նահանգական գիւղացիական գործերի առևանի անդամի փոխարքէն մասնակցում է շրջանային վարչութեան խորհրդականներից մէկը, շրջանի կառավարչի նշանակելով:

23) Գաւառական (շրջանակային) ընտրողական գործերի մասնաժողովները կազմում են՝ նահանգական դատարանի նըշշանակած անդամի նախագահութեամբ, իսկ անդամները լինում են՝ գաւառական ազնուականութեան պարագլուխը, հաշտարար դատաւորները, որոնք նշանակում են կամ հաշտարար ժողովների (կուրանի և Տերերի շրջաններում) և կամ տեղական նահանգական դատարանի կողմից, գաւառական քաղաքի քաղաքագլուխը, հարկային տեսուչը և նահանգական իշխանութեան նշանակած հաշտարար միջնորդը:

Ժամանոթ. 1) Այն գաւառներում և շրջանակներում, ուր գաւառական ազնուականութեան պարագլուխներ չը կան, նրանց փոխարքէն մասնաժողովում մասնակցում է Փոխարքայի հրաւէրով տեղական հոգատէրերից մէկը:

Ժամանոթ. 2) Այն տեղերում, ուր գիւղացիական հաստատութիւններ չեն մացրուած, նահանգական իշխանութիւններին է վերապահում իրանց հայեցողութեամբ փոխարքինել հաշտարար միջնորդիներին ուրիշ պաշտօնեաններով. սակայն մասնաժողովի անդամ չեն կարող նշանակուել նրանք, ովքեր օրէնքով պարտաւոր են ընտրողական ցուցակները կազմել նաև տեղական ոստիկանական պաշտօնեանները:

24) Սկզբանական նահանգի, Բաթումի ու Սուխումի շրջանների ընտրողական ժողովի, որը ընդհանուր է, ընտրութիւնների հակողութիւնը վերապահուում է Բաթումի շրջանի զինուորական նահանգապետին, և շրջանային ընտրողական ժողովը տեղի է ունենում Բաթում քաղաքում: Սուխումի և Զաքաթալի շրջանի ընտրութիւնների հսկողութիւնը (յօդ. 23 օգոստ. 6-ի կանոնադր.) այլ և շրջանային ընտրողական ժողովին մասնակցող տեղական ընտրողների ցուցակի յայտարարելը յանձնուում է տեղական շրջանային կառավարիչներին Փոխարքայի բարձր հսկողութեան ներքոյ: (48. օգոստ. 6-ի կանոն):

25) Պետական Դումայի անդամների ընտրութիւնները կատարւում են նահանգական ընտրողական ժողովներում, օրէնքների համաձայն, բոլոր ընտրողների հետ միասին:

Ծանօթ. —Գանձակի և Երևանի նահանգներում Նորին Ղայսերական Մածութեան Կովկասի Փոխարքան իրաւունք ունի առաջին ընտրութիւնների համար բաժանել նահանգական ժողովները երկու մասի և որոշել իւրաքանչիւր մասից Պետական Դումայի համար ընտրելի անդամների թիւը.

---